ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ ՎԵՀԱՓԱՌ ՀԱՅՐԱՊԵՏԻ ՆԱՄԱԿԸ ՌՈՒՄԻՆԻԱՅԻ ՊԱՏՐԻԱՐՔ ԺՈՒՍՏԻՆԻԱՆԻՆ՝ ՌՈՒՄԻՆԻԱՅՈՒՄ ԶՐՀԵՂԵՂԻ ՀԵՏԵՎԱՆՔՈՎ ՏՈՒԺԱԾՆԵՐԻՆ ՕԳՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ, ԵՎ ՊԱՏԱՍԽԱՆԸ

ՆՈՐԻՆ ՍՐԲՈՒԹՅՈՒՆ ԺՈՒՍՏԻՆԻԱՆԻՆ, ՊԱՏՐԻԱՐՔԻՆ ՌՈՒՄԵՆ ՕՐԹՈԴՈՔՍ ԵԿԵՂԵՑՈՒ

ԲՈՒԽԱՐԵՍՏ

Հոմ Մեր այցելությունից հետո, երբ գտնվում էինք Ֆրանսիա բաշխելու համար Մեր օրհնությունները հայ եկեղեցիներին ու համայնքներին, սրտի ցավով հետևեցինք տեղական թերթերի լուրերին, որոնք այնքան տխուր տեղեկություններ էին հաղորդում Ռումինիայից իբրև հետևանք աղետալի ողողումներին, որոնք պատճառել էին մարդկային կյանքի գոհեր և նյութական հսկայական վնասներ:

Գուցե ավելի քան երբեք իտրապես վշտահարվեցինք Ռումեն հայրենիքի բոլոր զավակների հետ և տնապես Մեր միտքը ուղղվում էր դեպի մեր ռումեն եղբայրները և առաջին հերթին դեպի Ձերդ Սրբությունը, հոգևոր հայրը բոլոր ռումինացիների:

Մեր հեռագրերը Մարսելից և ապա ս. Էջմիածնից թերևս կարողացան արտահայտել Մեր վիշտը ու նաև Մեր աղոթքը առ բարին Աստված, որպեսզի դադարեն ռումեն ժողովրդի տառապանքները:

Հինգ հազար դոլլարի շատ համեստ գումարը, որ կարողացանք ուղարկել Ձերդ Սրբության ի նպաստ աղետյալների, գումար, որը գոյացել էր ս. Էջմիածնի համար ֆրանսահայ մեր հավատացյալներից ստացված նվերներից, խնդրում ենք, որ ընդունեք իբրև արտահայտությունը Մեր սիրո զգացումներին և երախտագիտության Ռումեն հայրենիքի հանդեպ:

Հիշյալ գումարը Ձեզ փոխանցվելու է Ժնևից «Union de Banques Suisses»-ի միջոցով: Պիտի խնդրեինք, որ բարեհաճեիք կարգադրել գումարի ստացման հաստատումը, փոխանցումից հետո:

Հաստատում ենք Ձերդ Սրբության հեռագրերը լի եղբայրական ջերմ մաղթանքներով և ազնիվ մտածումներով:

Թող խաղաղություն լինի աշխարհի վրա և բարի կամեցողություն մարդկանց միջև:

Սիրով ի Քրիստոս

ՎԱԶԳԵՆ Ա
ԵԱՅՐԱԳՈՒՅՆ ՊԱՏՐԻԱՐՔ ԵՎ ԿԱԹՈՂԻԿՈՍ
ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ

10-ը հուլիսի 1970 թ.,
Ս. Էջմիածին

ՆՈՐԻՆ ՍՐԲՈՒԹՅՈՒՆ ՊԱՏՐԻԱՐՔ ՎԱԶԳԵՆ Ա ԿԱԹՈՂԻԿՈՍ ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ

Ս. ԷՋՄԻԱԾԻՆ

Ձերդ Սրբություն,

Սիրելյալ եղբայր ի Քրիստոս, ուրախ ենք Ձեզ հայտնելու, հոգեկան մեծ մխիթարությունը, որ պատճառեցին Մեզ Ձերդ Սրբության հեռագրերը՝ Մարսելից Ձեր կանոնական ուղևորության ընթացքին արտասահման և ս. Էջմիածնից, ինչպես և Ձեր նամակը 10 հուլիս թվակիր, մեր երկրի բնակչության համար ծանր օրերին, աղետալի ողողումների պատճառով, որոնք տեղի ունեցան տարվույս մայիս և հունիս ամիսներին:

«Ռումեն հողի զավակների» վիշտը բաժանելով և Ձերդ Սրբության ցավակցությունը արտահայտելու ջերմ և հուզիչ խոսքերը, ինչպես և Ձեր «աղոթքը առ բարին Աստված, որպեսզի դադարեն ռումեն ժողովրդի տառապանքները» մի անգամ ևս ապացուցեցին, թե ինչքան ուժեղ են այն թաքուն թելերը, որոնք կապում են Ձեզ ռումեն ժողովրդի հետ, որի ծոցում ծնվել եք, և կազմավորվել է Ձեր ընտիր անձնավորությունը:

Խորապես զգացված հայտնում ենք Ձեզ այս բոլորը և սրտանց շնորհակալություն հայտնում հինգ հազար դոլլարի Ձեր եղբայրական նվիրատվության համար, որ այնքան սիրով ուղարկեցիք Ռումինիայի աղետյալների համար: Այս գումարը, հեռու է «շատ համեստ» լինելուց, ինչպես արտահայտ-

վում է Ձերդ Սրբությունը, Մեզ համար ունի նյութական և խորհրդանշական մեծ կարևորություն, լինելով նվեր Ֆրանսիայի հայ հավատացյալների հովիրատվություններից, Էջմիածնի նրանց սուրբ տեղի համար, որովհետև հիշում եք անշուշտ ռումինական ասացվածքը՝ «Նվերից նվեր՝ լինում է դրախտ»:

Այսու Ձեզ ի գիտություն հայտնում ենք, թե Ձեր հինգ հազար դոլլարը, որ ստացվեց Ժնևի «Union de Banques Suisses»-ի միջոցով, չեք թիվ 399686, 7 հուլիս 1970, գանձվեց Մեր հրամանով «Banca Romana de Comert Exterior nr. 26»-ի կողմից և փոխանցվեց «Ողողումների աղետյալների» թիվ 1000 հաշվին, համաձայն թիվ 234002 ստացագրի 21 հուլիս 1970-ի: Ժնևի «Union de Banques Suisses»-ին Մենք ուղարկեցինք հաստատումը գումարի պաշտոնական ստացման, ստորագրված Մեր կողմից, ապահովագրված նամակով օդային փոստով:

Փակելով Մեր նամակը գոհություն ենք տալիս ողորմած Աստծուն, որ Իր սուրբ նախախնամությամբ, ռումեն ժողովրդի կրած ծանր հարվածը վերածեց մարդկային միասնության սքանչելի մի արտահայտության և քրիստոնեական սիրո ջերմ հորդման, որով Մենք աղոթում ենք, որ Տերը հեռու պահի աշխարհի բոլոր ժողովուրդներին նման քնական և այլ տեսակի աղետներից:

Վերստին ի սրտե շնորհակալություն հայտնելով, Ձեզ ողջունում ենք եղբայրական սիրով ի Քրիստոս Փրկիչը մեր փառավորյալ:

ԺՈՒՍՏԻՆԻԱՆ
ՊԱՏՐԻԱՐՔ ՌՈՒՄԻՆԻԱՅԻ

30-ը հուլիսի 1970 թ.
Բուխարեստ